Արձանագրություն N 3

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ շինարարության նախագծային աշխատանքների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«10» «մարտի» 2020թ.

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **բոլոր** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ **2020 թվականի փետրվարի 25-ից մինչև մարտի 10-ը**:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հայկ Խաչատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին
2. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին
3. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ և մասին
4. Մասնակիցներին տրված միավորների մասին
5. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին
6. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/ մասին

Հանձնաժողովի նախագահ Հայկ Խաչատրյանը ներկայացրեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ համաձայն աղյուսակի՝

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Արշալույս | 8,403,200 |
| 2 | Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում՝ Ոսկեհատ | 8,785,600 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի հայտերը www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2020 թվականի փետրվարի 25-ին, ժամը 10:00-ին:
- Հրավերում իրականացվել են փոփոխություններ և կատարվել հրապարակումներ:
- Հայտերի վերաբերյալ պաշտոնական հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
- ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ները//.

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ | armshin_ltd@mail.ru |
| 2 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | shinnaxagic@mail.ru |
| 3 | ՋԻՆՋ ՍՊԸ | info@jinjconsult.com |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի/երի/ գնահատման մասին

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը/ները/ հայտը/երը/ կազմել և ներկայացրել է/են/ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ՝
    - ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, քանի որ «Աշխատանքային փորձ» և «Աշխատակազմի որակավորում» չափանիշների մասով հրավերով պահանջվող տեղեկատվությունը չի ներկայացվել:

Որոշվեց՝

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերով սահմանված նվազագույն պահանջների մասով գնահատել բավարար, բացառությամբ՝ ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի:
2. ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հրավերի նվազագույն պահանջների մասով գնահատել անբավարար և մերժել:
3. Նիստը կասեցնել:
4. Ծանուցել հրավերի նվազագույն պահանջների մասով բավարար գնահատված մասնակցին/ներին/ ներկայացնել Հավելված 1.1-ով և Հավելված 1.2-ով ներկայացված տեղակատվությունը հիմնավորող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում:
5. Նիստը շարունակել մասնակցի/ների/ կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին տրամադրելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 15:30-ին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Մասնակիցը/ները/ սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Որոշվեց՝

6. ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ-ի և ՋԻՆՋ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը ոչ գնային պայմաններով գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգին ներկայացված գնի/երի/ մասին

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| հ/հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժին 1 | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները | | |
| | | Արժեք (ինքնարժեք+շահույթ) | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ | 6,400,000 | - | 6,400,000 |
| 2 | ՋԻՆՋ ՍՊԸ | 6,930,000 | 1,386,000 | 8,316,000 |
| 3 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | 6,700,000 | 1,340,000 | 8,040,000 |

| հ/հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժին 2 | | |
|---|---|---|---|---|
| | | Մասնակցի/ների/ կողմից ներկայացված գները | | |
| | | Արժեք (ինքնարժեք+շահույթ) | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ | 7,250,000 | 1,450,000 | 8,700,000 |
| 2 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | 6,900,000 | 1,380,000 | 8,280,000 |

Որոշվեց՝

1. ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ-ի և ՋԻՆՋ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնային առաջարկի մասով գնահատել բավարար:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Մասնակիցներին տրված միավորների մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Որոշվեց՝

1. Հաստատել հրավերի նվազագույն պահանջներին բավարարող մասնակիցների կողմից ներկայացված պայմանագրերի և աշխատակազմի տարիների հետևյալ քանակները՝

Չափաբաժին 1՝ «Արշալույս բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ

| Գնահատականը՝ Համապատասխան | «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշ | «Աշխատակազմի որակավորում» |
|---|---|---|
| Մասնակցի անվանումը | ջրամատակարարման համակարգերի նախագծային աշխատանքների քանակ | աշխատանքային փորձի ժամանակահատված (ներկայացված աշխատակազմի փորձի տարիների միջինը) |
| ՋԻՆՋ ՍՊԸ, 96.94 միավոր | 7 | 19 |
| ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ, 68.80 միավոր | 1 | 15 |

Չափաբաժին 2՝ «Ոսկեհատ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ

| Գնահատականը՝ Համապատասխան | «Աշխատանքային փորձ» որակավորման չափանիշ | «Աշխատակազմի որակավորում» |
|---|---|---|
| Մասնակցի անվանումը | ջրամատակարարման համակարգերի նախագծային աշխատանքների քանակ | աշխատանքային փորձի ժամանակահատված (ներկայացված աշխատակազմի փորձի տարիների միջինը) |
| ՋԻՆՋ ՍՊԸ, 100 միավոր | 7 | 22 |

Հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումն իրականացվել է համաձայն Հրավերով սահմանված գնահատման կարգի, և պայմանագրերը համարվել են նմանատիպ՝ համաձայն ՀՀ-ում գործող СНиП 2.04.02-84* «Водоснабжение. Наружные сети и сооружения» շինարարական նորմերի:

2. Հաստատել բավարար գնահատված մասնակիցների ստացած միավորները՝ համաձայն կից գնահատման թերթիկի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակից(ներ)/ որոշելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Որոշվեց՝

1. Հաստատել ընթացակարգի 1-2-րդ չափաբաժինների մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

Չափաբաժին 1

| Մասնակցի զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ |
| 2 | ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ |

Չափաբաժին 2

| Մասնակցի զբաղեցրած տեղը | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ |

2. «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12» ծածկագրով ընթացակարգի չափաբաժին 1-ի և 2-ի մասով ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ առավելագույն միավոր ստացած մասնակից ՋԻՆՋ ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հայկ Խաչատրյան ____________

*անդամներ՝*

Ռուբեն Թերզյան ____________

Արթուր Հովհաննիսյան ____________

Արթուր Սողոմոնյան ____________

Արեգ Եղիյան ____________

*քարտուղար՝*

Անի Բազեյան ____________

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով
ընթացակարգի 2020 թվականի մարտի 10-ի N 3
արձանագրության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 »

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների «շինարարության նախագծային աշխատանքների» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 10-ի թիվ 3 արձանագրային որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1 Գնման առարկա է հանդիսանում «Արշալույս բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել «X»/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել «X»/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ | X | - | |
| 2 | ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ | X | - | |
| 3 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | - | X | «Աշխատանքային փորձ» և «Աշխատակազմի որակավորումը» չափանիշը գնահատվել է անբավարար |

| Մասնակցի զբաղեցրած տեղը և անվանումը | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «X»/ | Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ | X | 6,930,000 |
| 2 | ԱՐՄՍՏՐՈՅ ՍՊԸ | | 6,400,000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ գործակիցների ամենաբարձր հանրագումար ստացած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Չափաբաժին 2 Գնման առարկա է հանդիսանում «Ոսկեհատ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություններ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել «X»/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել «X»/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ | X | - | |
| 2 | ՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ ՍՊԸ | - | X | «Աշխատանքային փորձ» և «Աշխատակազմի որակավորումը» չափանիշը գնահատվել է անբավարար |

| Մասնակցի զբաղեցրած տեղը և անվանումը | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել «X»/ | Մասնակցի առաջարկած գինը առանց ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | ՋԻՆՋ ՍՊԸ | X | 7,250,000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ գործակիցների ամենաբարձր հանրագումար ստացած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 » ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Բազեյանին:

Հեռախոս՝ 060-501-560 ներքին 506:

Էլեկտրանային փոստ՝ a.bazeyan@atdf.am

*Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ*

ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11/12 ծածկագրով
ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի նախագահ՝ Հ. Խաչատրյան